# Թափոնների մասին ընկալումներ

Դասապլան

## Ներածություն

Բոլորս էլ գիտակցում ենք, որ մարդու տարբեր գործողությունների արդյունքում առաջացած թափոնների կառավարումը այսօր դարձել է դժվարին խնդիր: Թափոնների կառավարումը կօգնի նվազեցնել թափոնները, եթե մենք «առավելագույն գործնական օգուտներ քաղենք արդյունքներից և վերջնական թափոնների նվազագույն քանակը ստեղծենք»: Այս սկզբունքներից մի քանիսը չափազանց կարևոր են, երբ դրանք դիտարկում ենք թափոնների կառավարման տեսանկյունից:

- **Հրաժարվել** այնպիսի նյութերից կամ արտադրանքից, ինչպիսին է՝ մեկանգամյա օգտագործման պլաստիկ շիշը:
- Թափոններ ստեղծելուց առաջ **վերանայել** կամ մտածել այլընտրանքային ապրանքների մասին՝ նվազեցնելով առաջացող թափոնների քանակը:
- **Նվազեցնել** ի սկզբանե առաջացող թափոնների քանակը (օրինակ՝ ավելի քիչ փաթեթավորմամբ ապրանքների գնում):
- **Վերօգտագործել** այն ապրանքները, որոնք սովորաբար դեն են նետվում (օրինակ՝ ապակե տարա սննդի համար կամ պլաստիկ տոպրակներ աղբամանների համար):
- **Վերամշակել** ապրանքները: Սա խորհուրդ է, տրվում միայն այն դեպքում, երբ արդեն ունենք առաջացած թափոններ և հնարավոր չէ դրանք օգտագործել:

**Էկո-Դպրոցներ ծրագրի քայլերը.** ուսումնական պլանների փոխկապակցում, կայունության աուդիտի իրականացում, իրազեկում և ներգրավում, մշտադիտարկում և գնահատում:
**Ուսումնական պլանների փոխկապակցում**. գիտություն, բնապահպանություն, հասարակագիտություն:

Eco-Schools

9-12 Տարեկան

4 QUALITY EDUCATION

11 SUSTAINABLE CITIES AND COMMUNITIES

12 RESPONSIBLE CONSUMPTION AND PRODUCTION

Այս դասապլանը աշակերտներին կծանոթացնի թափոնների կառավարման սկզբունքներին: Իրենց օգտագործած և առաջացրած թափոնների արտացոլման միջոցով դասապլանը աշակերտներին, կսովորեցնի կրկնակի մտածել՝ թափոն առաջացնելիս: Այն աշակերտներին տրամադրում է տվյալների հավաքագրման գործնական փորձի ապահովում հարցումների միջոցով, ինչպես նաև խրախուսում է մեկնաբանել և ներկայացնել տվյալները: Ուսումնական գործընթացները ներառում են գործնական ներգրավվածություն, դասարանում քննարկում, խմբային աշխատանք, պատասխանների վերլուծություն և թեմայի վերաբերյալ հաղորդակցության հոդվածի միջոցով:

## Նպատակներ

Աշակերտները կկարողանան.

- ացատրել, թե ինչ է թափոնը,
- ահմանել թափոնների խնդրի լուծման ուղիներ,
- գնահատել թափոնների կառավարման կարևորությունը:

## Պահանջվող ժամանակ/ տևողություն

**Դասարանային աշխատանք 1.** 45 րոպե առաջնորդելու աշակերտներին դասակարգել օգտագործած տարբեր իրերը, այնուհետև ներկայացնել թափոնների հայեցակարգը: Այնուհետև ուսանողներին ծանոթացնել վերօգտագործման, վերամիաստավորման, նվազեցման և վերամշակման հայեցակարգերին:

## Անհրաժեշտ ռեսուրսներ

• Աշակերտական գրենական պիտույքներ, ներառյալ նոթատետրեր և գիրչներ,
• ռեսուրս 1. Հասկանալով թափոնների կառավարման սկզբունքները:

# Գործողություններ

## Դասարանային աշխատանք 1

• Աշակերտներին հանձնարարել նախորդ օրն օգտագործած բոլոր իրերի մասին անհատական ցուցակ կազմել: Ցանկը պետք է ներառի ամեն ինչ՝ ներառյալ խաղալիքներ, սնունդ, թղթե անձեռոցիկներ, ափսեներ, նոթատետրեր, հագուստ, մատիտ և այլն:
• Աշակերտներին հանձնարարել դասակարգել դրանք ըստ վերօգտագործման կամ տեսակավորման հնարավորության:
• Աշակերտների հետ քննարկել, որ երբ որևէ իր օգտագործման ենթակա չէ, այն հավանաբար կվերածվի թափոնի: Ներկայացնել թափոնի հայեցակարգը՝ բացատրելով, որ մեկի համար թափոն համարվող ապրանքը հնարավոր է թափոն չհամարվի մյուսի համար:
• Աշակերտներին ծանոթացնել վերօգտագործման, վերաիմաստավորման, նվազեցման, վերամշակման հայեցակարգերին:
• Հանձնարարել աշակերտներին ուսումնասիրել «թափոնների կառավարման սկզբունքներ»-ի տակ գտնվող իրերի ցանկը և տեսնել, թե արդյոք դրանք կարելի է դասակարգել հրաժարման, վերօգտագործման, վերաիմաստավորման, նվազեցման և վերամշակման հայեցակարգերով՝ օգտագործելով ռեսուրս 1-ի աղյուսակը (Հասկանալով թափոնների կառավարման սկզբունքները): Ընդգծել, որ այս տարբերակով աշակերտները օգնում են նվազեցնել առաջացած թափոնները:
• Պատահականության սկզբունքով մի քանի աշակերտի խնդրել ընթերցել իրենց անհատական ցուցակները:

## Գնահատում

Աշակերտների արված դասակարգումներն ուսումնասիրելով՝ հնարավոր կլինի պարզել՝ արդյոք նրանք հասկանում են թափոնների հայեցակարգը, թափոնների կառավարման անհրաժեշտությունը, ինչպես նաև թափոնների կառավարման սկզբունքները:

# Ռեսուրս 1

## Հասկանալով թափոնների կառավարման սկզբունքները

| N | Օգտագոր-ծված իրեր | Կարո՞ղ են կրկին օգտա-գործվել (Այո/Ոչ) | Աղբաման նետված | Վերանայեք «աղբաման նետված» ցանկը և հնարավորության դեպքում դրանք տեսակավորեք ըստ ներքոնշալ տարբերակների Հրաժարվել Վերաիմաստավորել Նվազեցնել Վերօգտագործել Վերամշակել | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |